ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ

Սույն տեղեկատվական թերթիկում արծարծվում են Հայաստանում գործող աշխատանքի վարձատրության կարգին & նվազագույն ամսական աշխատավարձին վերաբերվող հարցեր: Հակիրճ ներկայացվում են գործատուների պարտականությունները աշխատանքի վարձատրության ոլորտում, մասնավորապես աշխատավարձի վճարման ժամկետները, ձ&երը, հավելումները աշխատանքի նորմալ պայմաններից շեղումների դեպքում & այլն: Տեղեկություններ են զետեղված ՀՀ-ում ներկայումս գործող նվազագույն ամսական աշխատավարձի չափի & մինչ& 2015 թ-ը դրա աճման նախատեսված դինամիկայի վերաբերյալ:

Մայիս 2004

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի վարձատրությունը գործատուների կողմից աշխատողներին՝ նրանց կատարած աշխատանքի դիմաց դրամական կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ ձևերով կատարվող վճարումն է:

Ո՞ՎՔԵՐ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ԵՎ ԳՈՐԾԱՏՈՒ

Աշխատողներ են՝
ա) պետական պաշտոնյաները.
բ) պետական ծառայողները.
գ) բյուջետային հիմնարկների աշխատողները.
դ) այլ վարձու աշխատողները:
Այլ վարձու աշխատողներ են համարվում վերոնշյալ խմբերի մեջ չմտնող այն անձինք, ովքեր կազմակերպություններում աշխատում են գործատուների հետ կնքված կոլեկտիվ և (կամ) անհատական աշխատանքային պայմանագրերի հիման վրա:
Գործատուներ են համարվում ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ վարձու աշխատանք օգտագործող կազմակերպությունները և ֆիզիկական անձինք:

ՈՐ՞ՈՆՔ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Աշխատանքի վարձատրության իրավական հիմքերն են՝
ա) պետական պաշտոնյաների համար՝ տվյալ պաշտոնում նրանց նշանակման կամ ընտրությունների արդյունքները հաստատող իրավական ակտերը.
բ) բյուջետային հիմնարկների աշխատողների և պետական ծառայողների համար՝ նրանց գործատուների հրամանները:
գ) վարձու աշխատողների համար՝ գործատուների հետ կնքված գրավոր պայմանագրերը,

Ի՞ՆՉ ԿԱՐԳՈՎ Է ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատավարձը յուրաքանչյուր ամիս հաշվարկվում և վճարվում է անմիջապես աշխատողին, նրա աշխատանքի վայրում, աշխատանքային օրերին, ամսական առնվազն մեկ անգամ՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը:
Աշխատավարձը այլ վայրում կարող է վճարվել միայն աշխատողի գրավոր համաձայնությամբ:
Գործատուները պարտավոր են աշխատավարձը վճարել ՀՀ ազգային արժույթով, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:
Աշխատողի ցանկությամբ աշխատավարձը կարող է վճարվել բանկային վկայագրով, չեկերով կամ աշխատողի կողմից նշված բանկային հաշվին (հասցեին) դրամական (փոստային) փոխանցումով: Բանկային (փոստային) ծառայությունների դիմաց վճարում են աշխատավարձ ստացողները:
Աշխատանքի վարձատրության մի մասը, բայց ոչ ավելի, քան տարիֆային աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի) 20 տոկոսը, աշխատողի գրավոր համաձայնությամբ կարող է վճարվել գործատուի սեփական արտադրանքով՝ դրանց բացթողման գներով: Ծխախոտի, ալկոհոլային խմիչքների, դեղերի, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար վնասակար, թունավոր, ռադիոակտիվ և ուժեղ ներգործության նյութերի ու այդպիսի նյութեր պարունակող ապրանքների օգտագործումը, որպես աշխատանքի վարձատրության միջոց, արգելվում է:
Վճարովի արձակուրդի դեպքում այդ ժամկետի համար աշխատավարձը վճարվում է արձակուրդի սկզբից առնվազն երեք օր առաջ: Աշխատանքային պայմանագրի

գործողության դադարման դեպքում աշխատողի աշխատավարձը վճարվում է դրա դադարման օրվանից՝ երեք օրվա ընթացքում:
Աշխատանքի վարձատրության մասին տեղեկատվությունը կարող է տրամադրվել միայն աշխատողի համաձայնությամբ կամ օրենքով սահմանված դեպքերում:
Առողջության համար վնասակար աշխատանքի կատարման դեպքում աշխատողին վճարվում է հավելում՝ նրա տարիֆային աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի) 50 տոկոսի չափով:
Առողջության համար առանձնապես վնասակար, առանձնապես ծանր աշխատանքի կատարման դեպքում աշխատողին վճարվում է հավելում՝ նրա տարիֆային աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի) 100 տոկոսի չափով:

Տես՝ Առողջության համար վնասակար աշխատանքների և մասնագիտությունների ու առողջության համար առանձնապես վնասակար, առանձնապես ծանր աշխատանքների և մասնագիտությունների ցանկերը հաստատելու մասին ՀՀ Կառավարության 11 դեկտեմբերի 2003թ-ի թիվ 1907-Ն որոշումը:

Գիշերային (երեկոյան ժամը 23.00-ից մինչև առավոտյան ժամը 8.00) և արտաժամյա աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար սահմանվում է հավելում՝ ժամային դրույքաչափի կրկնակի չափով:
Հանգստյան և տոնական օրերին աշխատանքի համար (եթե դա նախատեսված չէ աշխատանքային գրաֆիկով) սահմանվում է հավելում՝ ժամային (օրական) դրույքաչափի կրկնակի չափով, կամ աշխատողի ցանկությամբ հավելման փոխարեն նրան տրամադրվում են համապատասխան քանակի հանգստյան օրեր:
Ոչ աշխատողի մեղքով առաջացած պարապուրդը ենթակա է վճարման, որը չի կարող պակաս լինել ՀՀ օրենսդրությամբ և/կամ աշխատանքային պայմանագրով սահմանված չափից:
ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անհաղթահարելի ուժ ճանաչված պատճառներով առաջացած պարապուրդների համար աշխատողները չեն վարձատրվում:
Պարապուրդների վճարումը կատարվում է աշխատանքի վարձատրության համար սահմանված կարգով և ժամկետներում:
Ոչ աշխատողի մեղքով առաջացած պարապուրդի ընթացքում գործատուն իրավասու չէ պահանջել տվյալ աշխատողից, որպեսզի նա գտնվի աշխատանքի վայրում՝ աշխատանքային օրվա ընթացքում երկու ժամից ավելի տևողությամբ: Հակառակ դեպքում երկու ժամը գերազանցող պարապուրդի ժամանակահատվածը ենթակա է վճարման՝ պարապուրդի ամսվան նախորդող նրա տարիֆային աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի մեկ ժամի վարձատրության) առնվազն 2/3-ի չափով:
Աշխատողի մեղքով առաջացած պարապուրդը, ինչպես նաև աշխատողների կողմից հայտարարված գործադուլի ժամանակահատվածը վճարման ենթակա չեն:
Աշխատանքի վարձատրության վերոնշյալ կարգի ցանկացած խախտում կարող է բողոքարկվել վերադասության և/կամ դատական կարգով:

ՈՐՔԱ՞Ն Է ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ

2004թ-ի հունվարի 1-ից ՀՀ-ում նվազագույն ամսական աշխատավարձի չափը 13000 դրամ է:
Նվազագույն ամսական աշխատավարձի մեջ չեն մտնում հավելավճարները, պարգևատրումները և խրախուսման այլ վճարները:
Գործավարձով վարձատրվող աշխատակիցների համար ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափը հետևյալն է.
աշխատաժամանակի նորմալ տևողության դեպքում (40-ժամյա աշխատանքային շաբաթ)՝ 78 դրամ, աշխատաժամանակի կրճատ տևողության դեպքում (36-ժամյա աշխատանքային շաբաթ)՝ 86 դրամ, 30-ժամյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ 104 դրամ:

Նվազագույն ամսական աշխատավարձի մեջ չեն մտնում հավելավճարները, պարգևատրումները և խրախուսման այլ վճարները:
ՀՀ աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով 2003-2015թթ.-ներին նախատեսվում է նվազագույն և միջին ամսական աշխատավարձի հետևյալ չափերը.

Նվազագույն աշխատավարձ (դրամ).

2003	2004	2005	2006	2009	2012	2015
5000	12767	13053	13387	14414	15446	16588

ШЗ₃ЗЭ іЯЛіпінісУ (№сіЩ).

2003	2004	2005	2006	2009	2012	2015
29462	32078	35048	38235	48927	59609	71607

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂ ԵՔ ԴԻՄԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻՆ՝ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՍՑԵՆԵՐՈՎ

ք. Երևան, Նալբանդյան 7, բն 2;
հեռ/ֆաքս. 223786, 540199, էլ. փոստ՝ yerevan@ayla.am
ք. Գավառ, մարզպետարանի շենք, 4-րդ հարկ, հեռ/ֆաքս. (064) 25503, էլ. փոստ՝ gavar@ayla.am:
ք. Կապան, Ա. Մանուկյան 1, բն. 72,
հեռ/ֆաքս (085) 62511, էլ. փոստ kapan@ayla.am
ք. Գյումրի, Տիգրան Մեծի փող. 1 բն. 2;
հեռ/ֆաքս. (041) 38236, էլ. փոստ gyumri@ayla.am:
ք. Վանաձոր, հեռ/ֆաքս. (051) 22317,
էլ. փոստ՝ vanadzor@ayla.am:
ք. Իջևան, Մարզպետարանի շենք,
հեռ/ֆաքս. (063) 62499, էլ. փոստ ijevan@ayla.am:
ք. Գորիս, Մաշտոցի փող. 3, 2-րդ հարկ.,
հեռ./ֆաքս (084) 25861, էլ. փոստ goris@ayla.am:

Նաև կարող եք այցելել ՀԵԻԱ վեբ կայք www.ayla.am և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վեբ կայք՝ www.mss.am հասցեներով:

Սույն տեղեկատվական թերթիկը պատրաստվել և հրատարակվել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կողմից՝ Փրայսուոթերհաուսքուփերի և ՀՀ Կառավարության կողմից իրականացվող «Հայաստան. Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի» շրջանակներում՝ Միացյալ Թագավորության Միջազգային Զարգացման նախարարության կողմից տրամադրված միջոցների հաշվին: